ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ՝ dsegh.lori@mta.gov.am

N 0279-02/67
«04» մայիսի 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Դսեղ համայնի ավագանու 03.05.2017թ. թիվ 13-16 ներառյալ որոշումները:

Առդիր երկու ֆայլ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, 1718, հրապարակ 1.
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.lori@mla.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2017 թվականի N 13-Ն

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի «ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Դսեղ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 29-ի << Դսեղ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 31-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Աղաջանյան			
Ն. Դալլաքյան			
Կ. Ղազարյան			
Ա. Մատոյան			
Դ. Վանյան			
Ա. Քոչարյան			

ԴՍԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2017 թվականի N 14-Ն

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.«ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021Թ.Թ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Դսեղ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի «Դսեղ համայնքի 2017-2021թ.թ. հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Աղաջանյան			
Ն. Դալլաքյան			
Կ. Ղազարյան			
Ա. Մատոյան			
Դ. Վանյան			
Ա. Քոչարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2017-2021թթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հաստատվել է Դսեղ գյուղական համայնքի
ավագանու 2017թվականի մայիսի 03-ի
թիվ 14-Ն որոշմամբ

ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի համագյուղացիներ,

Ձեզ եմ ներկայացնում Դսեղ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը: Հայցում եմ Ձեր աջակցությունը հնգամյա ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման, համայնքի խնդիրների լուծման հարցում: Մեր նպատակն է կայուն զարգացման միջոցով բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները: Դսեղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ, բնակիչների համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջիկների համար գրավիչ բնակավայր: Ըստ արժանվույն նախապատրաստվել Մեծն Լոռեցու 150-ամյակին, ներգրավվելով ոչ միայն տեղաբնակներին, այլև համայնքից դուրս բնակվող դսեղցիներին:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական վերլուծության, առկա ռեսուրսների գնահատման և հիմնախնդիրների բացահայտման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի շղթա՝ ուղղված համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը և համայնքի երկարաժամկետ նպատակների իրականացմանը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել ՏԻՄ-ի առաքելությունը՝ բարձրացնել համայնքի բնակիչների կյանքի որակը, բարելավել նրանց կենսագործունեության միջավայրը:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ամենայն հայոց բանաստեղծն այսպես է բնութագրել իր հայրենի գյուղը. ,Դսեղը յուր անառիկ ու չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացված է հարավից անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմերից խոր ձորերով»:

Դսեղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջափնյա սարահարթի վրա: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30 կմ է, Երևանից՝ 150 կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղու Վանաձոր-Ալավերդի հատվածից 8 կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու «Թումանյան» կայարանից 10 կիլոմետր է: Գյուղը հյուսիսից սահմանակցում է Քարինջի, Թումանյանի և Ծաթերի համայնքային հողերին, արևելքից՝ Դսեղի անտառտնտեսության, իսկ արևմուտքից՝ Գուգարքի անտառտնտեսության հողերին: Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 829-2186 մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան: Դսեղի հանդի սահմանները հարավից սկսվում են զովասուն բարձր լեռներով, հյուսիսում վերջանում են անդնդախոր ձորերով: Դսեղն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ և խոնավ կլիմայով: Տարվա մեծ մասը գյուղը ենթարկվում է Միջերկրական և Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է մայիս-հունիս ամիսներին: Ամռանը և աշնան երկրորդ կեսին Դսեղում գերակշռում է ցածր խոնավությամբ տաք օդը: Դսեղը Հայաստանի հնագույն և հանրահայտ գյուղերից է: Գոյություն ունի Դսեղ անվան ստուգաբանության հետ կապված երկու տարբերակ. Դսեղ նշանակում է դուրս տեղ, այսինքն բնակավայրից զատված, առանձնացված տեղ, բ/ ըստ ավանդազրույցի ձորի գյուղերից տարբերելու համար սարահարթի գյուղը կոչել են Դրսի գեղ կամ Դսեղ: Գյուղն, ըստ գիտական հիմնավորումների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա.: Գյուղի շրջակայքում կան քարանձավներ Դռնավոր էրքե, Ծակ քարը և գյուղից Ջորագես իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որոնք հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործել են որպես կացարան, իսկ հետագայում օգտագործվել են միայն անասունների համար: Դսեղ անունն առաջին անգամ հիշատակվում է 15-րդ դարի սկզբին: Հակոբ Գ Սսեցի կաթողիկոսը 1404-1411թթ. Դսեղը հիշատակում է սանահինի հարկատուների ցուցակում:

Գյուղը հարուստ է բազմապիսի հուշարձաններով՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կոթողներ, կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն: Գյուղի անցյալը սերտորեն կապվում է Մամիկոնյան նշանավոր տոհմի շինարարական և բարենորոգչական գործունեության հետ: Գյուղի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ,

եկեղեցիներ: 19-րդ դարի II կեսի պեղումների և 1967-69թթ. գյուղի ներկայիս կենտրոնի կառուցապատման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ք. ա. X-IXդ.դ. և VIII-VI դդ. գերեզմաններ և բրոնզե դարի կենցաղային իրեր: Պահպանվել են նաև վաղ միջնադարին վերագրվող բաղնիքի խճանկար հատակը, բազիլիկ եկեղեցու (654թ.) ավերակները ազգագրական թանգարանով, Մամիկոնյան իշխանների հիմնադրած և XIXդ. վերակառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, խաչքարերով և կոթողով գերեզմանատունը (VII-XIIIդ.դ.), խաչարձաններ (XIդ.): Գյուղի անմիջական հարևանությամբ են գտնվում Քառասունից Մանկանց (X-XIդ.դ.), և Մամիկոնյանների հիմնադրած Բարձրաքաշ Ս. Գրիգոր (XII-XIIIդ.դ.) վանքերը, Սիրուն խաչ խաչքարը (XIIIդ): Գյուղում գտնվող գերեզմանատանը կան բազում այլ խաչքարեր, հուշակոթող և 7-րդ դարի մի փոքր բազիլիկ եկեղեցու ավերակները: Գյուղի տարածքում կա չորս մատուռ, որից կանգուն են մնացել Սբ. Սարգիս և Դդի գլխի Բալա Գիքորի կառուցած մատուռները:

Դսեղը մեծանուն հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդավայրն է, և նրա հայրենի տանը գործում է վերջինիս տուն-թանգարանը: Գյուղի կենտրոնում վեր է խոյանում բրոնզաձույլ արձանը (հեղինակ Ղ. Չուբարյան): Գյուղի կենտրոնում Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են VII դարին: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 20-րդ դարի սկզբին վերակառուցվել է: Գյուղի հարավ-արևելքում գտնվող Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում ,Ծովերե կոչվող գեղեցիկ լիճը: Խորհրդային շրջանում այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դսեղ համայնքն, ըստ << 2016թ. հունվարի 1-ի վիճակագրական տվյալների, ունի 2306 բնակիչ: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

• կանայք	1195
• տղամարդիկ	1111
• թոշակառուներ	480
• փախստականներ	0
• միակողմանի ծնողազուրկ երեխաներ	18
• հայրենական պատերազմի մասնակիցներ	2
• հաշմանդամներ	57
• աշխատունակներ	1151
• աշխատանք ունեցողներ	249
• գործազուրկներ	801
• ընտանիքների (ծխերի) թիվը	731
• «Փարոս» համակարգում գրանցված ընտանիքներ	87
• զոհվածների ընտանիքներ	2
• անօթևան ընտանիքներ	0

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի ընդհանուր բյուջեն կազմում է 51097700 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 13826600 ՀՀ դրամ: Դսեղ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարը և համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով: Դսեղ համայնքի ղեկավարի աշխատակազմում ընդգրկված են 15 հոգի: Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 87 ընտանիք:

Ավագանու անդամների կազմը

Անուն, Ազգանուն	Սեռը	Քանի՞ անգամ է ընտրվել
Աղաջանյան Արեն	արական	1 անգամ
Դալլաքյան Նիկալ	արական	3 անգամ
Խաչատյան Փաշիկ	արական	4 անգամ
Մատոյան Արթուր	արական	1 անգամ
Վանյան Դավիթ	արական	1 անգամ
Ղազարյան Կարո	արական	3 անգամ
Քոչարյան Արամ	արական	1 անգամ

Համայնքի ղեկավարի աշխատակազմը և համայնքային ծառայողների ցանկը

Պաշտոն	Դրույքաչափ
Համայնքի ղեկավար	1 դրույք
Համայնքի ղեկավարի տեղակալ	1 դրույք
համայնքի ղեկավարի օգնական	1 դրույք
աշխատակազմի քարտուղար	1 դրույք
առաջատար մասնագետ	2 դրույք
1-ին կարգի մասնագետ	2 դրույք
2-րդ կարգի մասնագետ	1 դրույք
Գործավար	1 դրույք
վարորդ	1 դրույք
ջրագծի և ջրի ծորակների գծով հսկիչ	1 դրույք
ջրագծի փականագործ-վարպետ	1 դրույք
հավաքարար	1 դրույք

ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դսեղում խորհրդային շրջանում գործել է փայտամշակման կոմբինատ, որտեղ զբաղված է եղել գյուղի բնակչությունը 200 կին և տղամարդ, և դրա շնորհիվ համայնքի բնակիչներից շատերը տիրապետում են կահույքագործի մասնագիտությանը: Ներկայումս կոմբինատը մասնակի է գործում, սակայն աշխատանքային փորձառությունը հնարավորություն է տվել ստեղծելու 15 փոքր փայտամշակման արտադրամասեր, որտեղ հիմնականում պատրաստում են աթոռներ, սեղաններ, խոհանոցային կահույք և այլն: Գյուղում արտադրված փայտե, լամինատե կահույքը վաճառվում է Հայաստանի հանրապետության տարբեր մարզերում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում: Համայնքում գործում են նաև 12 խանութ-կրպակներ, 1 հացի փուռ, 1 դեղատուն, ծաղիկների ջերմոց: «Դսեղի

անտառտնտեսություն» ՊՈԱԿԸ-ը և քարի վերամշակման 4 արտադրամաս, որտեղ Դսեղի լեռներից արդյունահանվող սև բազալտից, գրանիտից և տարբեր քարերից արտադրվում են երեսպատման սալիկներ, եզրաքարեր, գերեզմանաքարեր և այլն: Գյուղում գործում է նաև կապի բաժանմունք, «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ, ՄԵՎԱՆԾ-1 հատ: Համայնքում գործում է «Դսեղի արոտօգտագործողների միություն» սպառողական կոոպերատիվը:

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Անհատական բնակելի տներ 701

Բնակարանի կարիքավորներ 22

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1.	Համայնքի վարչական տարածքը	- 7922 հա
2.	Վարելահողեր	- 667 հա
3.	Խոտհարքներ	- 749 հա
4.	Արոտավայրեր	- 3115 հա
5.	Ձորեր, թփուտներ, անտառ	- 2593 հա
6.	Դաշտային ճանապարհներ	- 45 հա
7.	Արտադրական մաս	- 35,5 հա
8.	Հանրային շենք, հրապարակ, փողոց	- 39 հա
9.	Տնամերձ հողեր	- 150 հա
10.	Դպրոց	- 1,66 հա
11.	Գերեզմանոց	- 4,2 հա
12.	Գյուղամիջյան փողոցներ	- 135 հա
13.	Այլ հողօգտագործողներ	- 6 հա
14.	Սեփականաշնորհված հողեր	- 1136 հա
15.	Մեկ հողաբաժնի չափը	- 1,09 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տեսակ	հա
Խոտհարքներ	749
Արոտավայրեր	3115
Վարելահողեր	667
Այլ հողատեսքեր	508
Ընդամենը՝	5039

Գյուղի տարածքում հողերն ունեն արտահայտված գոտիականություն: Անմիջապես գյուղի տարածքում ընկած են լեռնատափաստանային սևահողերը, մեծ տարածքներ են զբաղեցնում բարեխառն-խոնավ անտառների հողերը: Դրանցից բարձր՝ զգալի տարածության վրա հանդիպում են մերձալպյան մարգագետնային դարչնագույն հողերը: Դսեղ գյուղին պատկանող տարածքում բուսականությունը բազմազան է, ընդամենը 20-25 կմ տարածության վրա ուղղագիծ գոտիականությամբ հերթագայում են բուսականության 5 տիպեր՝ լեռնատափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան և ալպյան:

Համայնքի բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ ու բուսաբուծությամբ: Հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ: Սակայն գյուղատնտեսության համար Դսեղը ռիսկային գոտի է. բնակլիմայական պայմաններից և սոցիալ-տնտեսական իրավիճակից ելնելով համայնքի հողատարածքների մեծ մասը չի մշակվում. հողերը չեն ոռոգվում, տարվա ընթացքում տեղումներն անհամաչափ են: Ոռոգման ջուր չունենալու պատճառով բնակիչների համար դժվարացել է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվելը: Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարումներն ու ցրտահարումները: Դսեղում հաճախակի է կարկուտ տեղում: Չնայած դրան, բնակիչները քիչ են զբաղվում գյուղատնտեսությամբ, քանի որ ցանքատարածքները մշակելու դժվարություններ ունեն պարարտանյութ և այլն: Բացի այդ, անհրաժեշտ քանակի հակակարկտակայաններ չկան, որոնք ցանքատարածքները կպաշտպանեն աղետալի կարկուտից: Բնակչության փոքրաթիվ մասը եգիպտացորեն, կարտոֆիլ և այլ մշակաբույսեր է աճեցնում, սակայն այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Բացի այդ, գյուղի մեքենատրակտորային շարժակազմը մաշված է և թարմացման կարիք ունի:

Անասնապահությամբ զբաղվում է համայնքի տնտեսությունների կեսից ավելին: Գյուղի հանդերն ու դաշտերը մինչև խոր աշուն ծածկված են փարթամ կանաչով, որը շատ նպաստավոր է անասնապահության համար: Համայնքում հաշվառված է 1143 խոշոր եղջերավոր անասուն, 656 գլուխ խոզ, 840 ոչխար, 5 այծ, 491 մեղվափեթակ. 3674 թև թռչուն, և 115 հատ ձի: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են 1000 տոննա կաթ, 36 տոննա միս, 660000 ձու, 3500 կգ մեղր: Արտադրանքը սպառվում է համայնքում բնակիչների և զբոսաշրջիկների կողմից և արտահանվում համայնքից դուրս:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Դսեղը Հայաստանի ամենագեղեցիկ անկյուններից է. Դսեղում տուրիզմի զարգացման համար առկա են բոլոր հնարավորությունները. գյուղի դիրքը, բնակլիմայական պայմանները և բնության հուշարձաններով հարուստ տեղանքը տուրիզմը զարգացնելու լիարժեք հնարավորություններ է ընձեռում: Գյուղը հարուստ է միջնադարյան հուշարձաններով, խաչքարերով ու վանքերով: Դսեղում մինչ օրս անխաթար վիճակում կանգուն է մի քառակող կոթող, որը թվագրվում է 5-րդ դարին: Դսեղի միջնադարյան հուշարձանների շարքը զարդարում են 13-րդ դարի խաչքարերը, որոնց գլուխգործոցը համարվում է Սիրուն խաչը: Խաչքարը 1969թ. ցուցադրվել է Փարիզի ցուցահանդեսում և արժանացել է 2-րդ մրցանակին: Դսեղում գտնվող տարբեր դարերի վանքերն ու եկեղեցիները, Մամիկոնյանների տոհմական գերեզմանոցը, առանձնահատուկ տեղ են զբաղեցնում միջնադարյան հուշարձանների շարքում, այն համարվում է Դսեղի հուշարձանների գլուխգործոցը: Համալիրն ըստ երևույթին երկար կյանք չի ունեցել, պատերի ամենահին արձանագրությունները վերաբերում են 13-րդ դարի կեսերին: Վանքը մեր ժամանակներն է հասել ամբողջովին ավերակ վիճակում: Անցյալի տեղեկագիրներից մեկն այն նմանեցրել է «կանաչ մահճում պառկած, ժպիտը դեմքին ջահել ու գեղեցիկ ննջեցյալի»: Վանքը մասնակիորեն նորոգվել է 1939թ.-ին, սակայն ամեն տարի մաքրվում է: Համալիրը բաղկացած է երկու եկեղեցուց, մատուռից, Մամիկոնյանների տոհմական գերեզմանոցից, ձիթհանից և խաչքարերի մնացորդներից: Համալիրը տեսնելու նպատակով ամեն տարի Դսեղ են այցելում հազարավոր մարդիկ: Գյուղի տարածքում է գտնվում Բարձրաբաշ Սուրբ Գրիգոր վանքը, որը եղել է Մամիկոնյան իշխանների տոհմական տապանատունը: Իր բարձրարժեք քանդակներով ու հարդարանքի տարրերով հայտնի վանքն այսօր անխնամ և անբարեկարգ վիճակում է գտնվում: Անենուր սփռված են խաչքարերի ու տապանաքարերի բեկորներ, որոնք այդ վիճակում էլ, հիրավի, հիանալի են ու գեղեցիկ: Դեպի վանք տանող ճանապարհին է գտնվում այն աղբյուրը, որից «Գիքոր» ֆիլմում ջուր են խմում Թումանյանի հայտնի պատմվածքի հերոսները՝ Համբոն ու Գիքորը: Այդ պատճառով էլ տեղացիներն աղբյուրն անվանել են Գիքորի աղբյուր:

Դսեղից 2,5 կմ հարավ-արևելք, անտառի մեջ է գտնվում գյուղի ամենատեսարժան վայրերից մեկը՝ մի գեղեցիկ լճակ, որին լոռեցիները «Ծովեր» անվանումն են տվել: «Ծովեր»-ի հարևանությամբ «Ծովեր» կոչվող հանգստի գոտում էկոտուրիզմի և արկածային տուրիզմի զարգացման համար ստեղծվել են ենթակառուցվածքներ զբոսաշրջիկներին կտրամադրվեն քնապարկեր, հեծանիվներ, նավակներ և այլ անհրաժեշտ պարագաներ: Հանգստյան գոտու ստեղծումը էկոտուրիզմի զարգացման միջոցով կարող է ծառայել որպես այլընտրանքային եկամտի աղբյուր բնակիչների և համայնքի համար նվազեցնել անտառահատման գործընթացը: Ագրոտուրիզմը զարգացնելու նպատակով գյուղում բացվել են վեց զբոսաշրջային հյուրատներ, տեղադրվել են տեղեկատվական վահանակներ: Այդ հեքիաթային խորհրդավոր լիճն ամեն տարի իր շուրջն է հավաքում հազարավոր զբոսաշրջիկների: Լիճը սնվում է իր տակից բխող աղբյուրներից, ջրի պակասը լրացվում է նաև տեղումների հաշվին:

Դսեղը հարուստ է նաև անտառներով, բնակիչների համար կենսական նշանակություն ունեն կաղնու և հաճարենու անտառները: Անտառներին կից մարգագետիններում և շրջակա տարածքներում հանդիպում են 5 տասնյակից ավելի դեղաբույսեր: Ձկներից հանդիպում են կարմրախայտ, կողակ, արևելյան արագաշարժ, քուռի երկածուկ, բեղլու, արծաթափայլ կարաս, ծածան, խեցգետին և այլն: Էկոտուրիզմի սիրահարների համար նոր ծառայություններ

մատուցելու հնարավորություններ կան, ինչպես օրինակ, ձիերով անտառում ու լճի շրջակայքում զբոսանք կազմկերպելը: Գյուղում ձիապահությունն ընդունված է և բնակիչներից շատերն ունեն ձիեր, նույնիսկ ֆերմերային տնտեսություն կա:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գործում է Դսեղ-Վանաձոր-Դսեղ ավտոբուսային կապը: Տարվա տաք եղանակներին Դսեղ-Երևան և հակառակ ուղղությամբ միկրոավտոբուսային երթուղու անհրաժեշտությունը մեծ է: Համայնքը մարզկենտրոնի և Ալավերդի քաղաքի հետ կապված է ասֆալտապատ, բարեկարգ ճանապարհով: Ներհամայնքային ճանապարհների անընդհատ վերանորոգման խնդիր կա, քանի որ համայնքում խմելու ջրագծի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքները դեռ չեն ավարտված:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի նոր մասնաշենքը կառուցվել է 1972թ.-ին և նախատեսված էր 660 աշակերտի համար: Այն հիմնանորոգվել է 2011թ.-ին: Գործում է դպրոցի մասնաշենքերից մեկը: Վերանորոգման կարիք ունի դպրոցի մարզադահլիճը: Ուսուցչական կազմը համալրված է տեղի որակյալ կադրերով, դպրոցը հայտնի է իր որակյալ կրթությամբ:

Կրթական օջախներ	Քանակը	Սովորողների թիվը	Աշխատողների թիվը
Միջնակարգ, հանրակրթական դպրոց	1	210	42

Տվյալներ նախադպրոցական կազմակերպությունների մասին.

Նախադպրոցական տարիքի երեխաներ 98: Մանկապարտեզի շենքը 2014թ. հիմնանորոգվել է Քաուսթերփարթ ինթերնեշնլի դրամաշնորհային ծրագրով և Դսեղ համայնքի ներդրումով:

Կազմակերպության անվանումը	Ստեղծման տարին	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը
Դսեղի ՆՈՒՀ	1969թ.	30	6

ՄՇԱԿՈՒՅԹ

Թանգարան

1939թ. կառավարության որոշմամբ Հովհ. Թումանյանի հայրական տունը դարձել է տուն-թանգարան: Թանգարանի ցուցանմուշներն օգնում են այցելուին՝ ծանոթանալու XIX դարի հայ գյուղի կենցաղին, սովորություններին, Թումանյանի կյանքին ու գործին (Թումանյան գրողը, Թումանյան հասարակական գործիչը, Թումանյան հրապարակախոսը, քաղաքացին): Տարեկան մոտ 10 հազար այցելու է գալիս թանգարան: Այստեղ կազմակերպվում են հետաքրքիր, բազմամարդ միջոցառումներ: Թանգարանի ցուցանմուշները տարեցտարի հարստանում են Թումանյան ընտանիքի նվիրաբերած նոր մասունքներով: Թանգարանի բակում Թումանյանի կիսանդրին է՝ Այծեմնիկ Ուրարտուի հեղինակությամբ: Մեծ բանաստեղծի հայրական տան բակում՝ Ռոմեն Զուլհակյանի նախագծած մատուռում հանգչում է Ամենայն հայոց բանաստեղծի սիրտը, որը մինչև Թումանյանի 125-ամյակը պահվում էր Երևանի բժշկական ինստիտուտում: Ամեն տարի Թումանյանի ժառանգները թանգարանին են նվիրում Թումանյանի իրերից:

Մշակույթի տուն

Դսեղի մշակույթի տան շենքը կառուցվել է 1969թ. Հովհ. Թումանյանի 100-ամյա հոբելյանի առիթով: 2009թ. հիմնանորոգվել է շենքը, ապահովվել ջեռուցման համակարգով, դահլիճը կահավորվել է աթոռներով: Շուրջ 10 տարի է, ինչ Դսեղի մշակույթի տանը գործում է ազգագրական պարային համույթ, որն իր ելույթներով հանդես է գալիս ոչ միայն գյուղի մշակութային միջոցառումների ժամանակ, այլ նաև գյուղից դուրս: Խումբը ապահովված է պարային տարազներով, որոնք ձեռք են բերվել «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության դրամաշնորհային ծրագրի միջոցով և Դսեղի համայնքապետարանի ներդրումով: Նմանօրինակ ծրագրերով մշակույթի տունը համալրվել է ձայնային տեխնիկայով, ստեղծվել է մեծահասակների զբաղվածության կենտրոն: Մշակույթի տանը գործում է նաև երիտասարդական նախաձեռնությունների ակումբը, երգի խմբակ: Համայնքում անց են կացվում հիշատակի օրերին նվիրված երթեր ու մոմավառություններ:

Դսեղում ամեն տարի հոկտեմբեր ամսին կազմակերպվում են թումանյանական օրեր: Այդ օրերին միջոցառումներին մասնակցելու նպատակով Դսեղ են ժամանում Մեծ բանաստեղծի սերունդները, հյուրեր տարբեր երկրներից, Հայաստանի քաղաքներից ու գյուղերից և հանրապետության ղեկավարությունը: Սկսած 2006թ.-ից ի թիվս բազմաթիվ միջոցառումների, Դսեղում անց է կացվում տիկնիկային թատրոնների միջազգային ամենամյա փառատոն «Թումանյանական հեքիաթի օր» թեմայով: Այդ օրերին արտերկրից ժամանած հյուրերն ու հայ դերասանները հյուրընկալվում են դսեղցիների տներում՝ վայելելով տանտերերի ջերմ վերաբերմունքը: Համայնքում գործում է թատերական խմբակ:

Գրադարաններ

Մշակույթի տան շենքում է գտնվում գյուղի գրադարանը, որն ունի 11000 կտոր գիրք և գրականություն: Գրադարան ունի նաև գյուղի միջնակարգ դպրոցը:

Զբոսայգիներ

Գյուղի կենտրոնական հրապարակում կա հանգստի պայմաններով հագեցած մանկական խաղահրապարակ: Անհրաժեշտություն կա այստեղ իրականացնել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

ՍՊՈՐՏ

Գյուղում գործում է ազատ ոճի ըմբշամարտի խմբակ, պարապմունքներն անցկացվում են դպրոցի մարզադահլիճում, որն ունի վերանորոգման խնդիր: Ազատ ոճի ըմբշամարտը համարվում է գյուղում ամենամասսայական մարզաձևը, ունի տասնամյակների պատմություն: Այս մարզաձևով այժմ պարապում են արդեն երրորդ սերնդի ներկայացուցիչները: Խմբի մարզիկները մասնակցում են մարզային, հանրապետական մրցումներին և հաճախակի նվաճում մրցանակային տեղեր: Դսեղցիների նախընտրած մարզաձևերից է շախմատը: Ամեն տարի Հանրապետության տոնի օրը մշակույթի տան շախմատի սենյակում անց է կացվում շախմատի բաց մրցաշար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դսեղում գործում է «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ: Այստեղ աշխատում են 15 աշխատակիցներ, կենտրոնն սպասարկում է Դսեղ, Աթան, Մարց, Քարինջ, Լորուտ, Ահնիձոր, Չկալով համայնքներին: Կենտրոնը Հայաստանի Մանուկների Հիմնադրամի աջակցությամբ համալրվել է բժշկական սարքավորումներով:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

1. Ֆրանսիայի ՊԱԿԱ մարզի և Լոռու մարզի համագործակցության արդյունքում Ալավերդի քաղաքում ստեղծված «Թումանյանական աշխարհ» զբոսաշրջային կենտրոնը սպասարկում է Թումանյանի տարածաշրջանի յոթ համայնքներին, այդ թվում Դսեղին, նպաստելով ագրոտուրիզմի զարգացմանը համայնքում:
2. Հայաստանի Մանուկների Հիմնադրամի ֆինանսավորմամբ համայնքի դպրոցում ստեղծվել են խմբակներ ձեռագործության, թատերական, մասնագիտական կողմնորոշում և այլն: Հիմնադրամի աջակցությամբ համայնքում տեղի են ունենում միջոցառումներ, կազմակերպվում են ամառային ճամբարներ: Հիմնադրամն աջակցում է նաև «Դսեղի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին:
3. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի և համայնքի ներդրումով իրականացվող խմելու ջրի 28կմ ներքին և 23կմ արտաքին ցանցի և Ծովեր լիճը թափվող ինքնահոս 9,5կմ ցանցի վերանորոգման աշխատանքները ընթացքի մեջ են:

4. 2015թ. նոյեմբերի 12-ին համայնքում բացվեց Դսեղի այցելուների կենտրոնը: Կենտրոնի նպատակն է էկո-կրթության, ռեսուրսների կայուն օգտագործման և էկոտուրիզմի միջոցով ապահովել մարդու կապը բնության հետ: Մի կողմից կենտրոնը կծառայի որպես մի վայր, որտեղ երեխաները և աշակերտները կարող են ստանալ էկո-կրթություն և շփվել բնության հետ, մյուս կողմից այն նպատակ ունի խթանելու բնապահպանական գործունեությունը, դրանով իսկ աջակցելով շրջանի բուսական և կենդանական աշխարհի պահպանմանը: Բացի այդ, այն ապահովելու է զբոսաշրջիկներին տարածքի տեսարժան վայրերի, ամենամյա միջոցառումների և հասանելի հյուրատների մասին համապարփակ տեղեկատվությամբ: Այն առաջարկելու է զանազան տուր-ծառայություններ նպաստելով էկո-տուրիզմի զարգացմանը և այդպիսով իսկ աջակցելու է Դսեղ համայնքի սոցիալ-տնտեսական բարօրությանը:
5. ԱՄՆ միջազգային գործակալության աջակցությամբ Հեյֆեր Ինթերնեշնլի ծրագրով 2015թ Դսեղ համայնքում ստեղծվել են 4 հյուրատներ: Հյուրատները համագործակցում են «Թումանյանական աշխարհ» զբոսաշրջային կենտրոնի հետ:

ԾՐԱԳԻՐ 1

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը – Համայնքն ունի գերեզմանատուն 2 կմ երկարությամբ եզրագծով, որը ցանկապատված չէ: Այդ իսկ պատճառով անհնար է դարձել ապահովվել գերեզմանատան պատշաճ պահպանությունը:

Նպատակը – Այս ծրագրի իրականացումը կնպաստի գերեզմանատան պահպանությանը:

Խնդիրը –

- Համագործակցել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի հետ
- Կազմել նախագծա-նախահաշվային փաթեթ
- Կատարել աշխատանքները

Անհրաժեշտ է մոտ 5 մլն. դրամ: Համայնքի 2018թ-ի բյուջեով նախատեսել 2 մլն. դրամ: Մնացած 3 մլն. դրամը նախատեսվում է ձեռք բերել բարեգործական կամ միջազգային կազմակերպություններից, «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրից :

արդյունքները –

- Համայնքի գերեզմանատան պահպանություն
- շահառու կարող է համարվել ողջ համայնքը:

ԾՐԱԳԻՐ 2

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նկարագիրը – Լոռու մարզի Դսեղ համայնքում գյուղատնտեսությունը զարգացած չէ, վարելահողերը չմշակվելու պատճառով վեր են ածվել խոտհարքների, իսկ արոտավայրերը հեռազնա են: Գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում համարվում է քիչ եկամտաբեր: Այսօր ֆերմերները կաթի իրացման լուրջ խնդիր ունեն:

Նպատակը – Նախատեսվում է համայնքում ստեղծել կաթնամթերքի վերամշակման կետ և ձեռք բերել գյուղ. տեխնիկա՝ նպաստելով համայնքի անասնապահության և հողագործության զարգացմանը:

Խնդիրը – Ծրագրը նախատեսվում է իրականացնել Հեյֆեր Ինթերնեշնլի և Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի միջոցների հաշվին:

Արդյունքները – Ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, որը կնպաստի նաև աշխատատեղերի ստեղծմանը, բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

ԾՐԱԳԻՐ 3

ՄԱՐԶԱՍՐԱՀԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Նկարագիրը – Դսեղ համայնքի մարզասրահը գտնվում է համայնքի միջնակարգ դպրոցում: Այն ունի հիմնանորոգման խնդիր: Դահլիճում գործում է ազատ ոճի ըմբշամարտի խումբը, որտեղ մարզվում են թվով 30-35 սաներ:

Նպատակը –

- ստեղծել պարապմունքներն անցկացնելու համար նորմալ պայմաններ

- հնարավորությունների սահմաններում ստեղծել այլ սպորտաձևերի խմբեր
- աջակցել համայնքի պատանիների և երեխաների առողջ ապրելակերպին
- նպաստել երիտասարդների ակտիվ ժամանցի կազմակերպմանը

խնդիրը –

- կազմել վերանորոգման նախագիծ նախահաշիվ
- դիմել հիմնադրամների ու միջազգային կազմակերպությունների՝ ֆինանսավորելու համար, ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի 3-4 մլն. դրամ:

արդյունքները –

- համայնքում կզարգանա սպորտը, կբացվեն նոր սպորտաձևերի խմբեր
- Կզարգանա երեխաների առողջ ապրելակերպը

ԾՐԱԳԻՐ 4

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

նկարագիրը – Ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 28 կմ է, որոնք ժամանակ առ ժամանակ ծածկվում են ջրափոսերով և դառնում դժվար անցանելի՝ ստեղծելով լրացուցիչ դժվարություններ և անհարմարություններ հետիոտների և տրանսպորտային միջոցների համար:

նպատակը – Ներհամայնքային ճանապարհները բերել բարեկարգ վիճակի՝ վերացնելով ջրափոսերը և դարձնելով անցանելի ու հարմարավետ տարվա բոլոր եղանակներին:

խնդիր – Կատարել համայնքի փողոցների խճապատում, հարթեցում: Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներով, պարբերաբար, մոտ 1,5 մլն դրամ արժողությամբ:

արդյունքները – կբարեկարգվի համայնքի տարածքը, ճանապարհները, փողոցները կդառնան անցանելի մտարվա բոլոր եղանակներին:

ԾՐԱԳԻՐ 5

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Նկարագիրը – Դսեղը գիշերային ժամերին ընկղմվում է մթության մեջ, քանի որ համայնքի լուսավորության համակարգը գտնվում է ոչ բավարար վիճակում: Համայնքի միայն կենտրոնական մասն է լուսավորվում, այն էլ ոչ բոլոր լուսատուներն են սարքին վիճակում: Այդ պատճառով տեղաբնակների և համայնքի զբոսաշրջիկների համար երեկոյան և գիշերվա ժամերին առաջանում են դժվարություններ տեղաշարժման հետ կապված:

Նպատակը –

- նպաստել համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը
- բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները

Խնդիր –

- պատվիրել նախագծա-նախահաշվային փաթեթ
- դիմել դոնոր կազմակերպությունների
- կատարել աշխատանքները:

Արդյունքները –

- լուսավորված համայնք
- համայնքի 2200 բնակիչներ, հազարավոր զբոսաշրջիկներ տեղաշարժվում են հեշտ և անվտանգ:

ԾՐԱԳԻՐ 6

ԹՈՒՄԱՆՅԱՆ 150-ԱՄՅԱԿ

1. *Նկարագիրը* – Քանի որ 2019թ. Թումանյանի 150-ամյակն է, հայտարարել թումանյանական շաբաթ և մեկ շաբաթ անընդմեջ թումանյանական թեմաներով միջոցառումներ անցկացնել համայնքում: Մեկ օրը նվիրել Թումանյանի հեղինակած խաղերի՝ «Հնարամիտ հովիվը», «Հայոց գետերը», անցկացմանը, աջակցել «Լոռեցի»

մշակութային հասարակական կազմակերպությանը Թումանյանական թեմաներով քանդակների կոմպոզիցիայի ստեղծմանը

նպատակը –

- նպաստել Թումանյան երևույթի մասսայականացմանը /որպես գրող, հրապարակախոս, քաղաքացի, մեծ հայ/
- բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները:

խնդիրները-

- առաջարկել համայնքի կառույցներին /դպրոց, մանկապարտեզ, թանգարան, մշակույթի տուն/ նախապատրաստել և անցկացնել միջոցառումներ
- թանգարանի բակում կազմակերպել խաղերը և հաղթողներին հանձնել մրցանակներ
- աջակցել «Լոռեցի» մշակութային հասարակական կազմակերպությանը Թումանյանական թեմաներով քանդակների կոմպոզիցիայի ստեղծմանը

արդյունքները –

- Թումանյանին ըստ արժանվույն գնահատում
- համայնքում մշակույթի զարգացում:

ԾՐԱԳԻՐ 7

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՀԻՄՆՈՒՄ

Նկարագիրը – Դսեղ համայնքի բնակիչները բազմիցս դիմել են Դսեղի համայնքապետարան՝ համայնքում հանդիսությունների սրահ բացելու խնդրանքով: Տնային պայմաններում հանդիսությունների կազմակերպումը կապված է որոշակի դժվարությունների հետ՝ տարածքի, գույքի, սպասքի և այլն: Նաև պետք է հաշվի առնել միջոցառման գեղագիտական կողմը՝ սրահում կարելի է ամեն ինչ կազմակերպել ճաշակով և գեղեցիկ: Հանդիսությունների սրահի

համար նախատեսվում է մանկապարտեզի երկրորդ մասնաշենքը, որը վերանորոգման խնդիր ունի:

Նպատակը – նպաստել բնակիչների կենցաղ- սպասարկման ծառայությունների բարելավմանը

խնդիրները-

- ըստ նախահաշվի իրականացնել վերանորոգումը, դիմելով դոնորների, բարերարների
- ձեռք բերել անհրաժեշտ գույք և սպասք և կահավորել սրահը

արդյունքները –

- բնակիչները կունենան վերանորոգված, կահավորված հանդիսությունների սրահ
- մարդիկ կազատվեն ավելորդ կազմակերպչական դժարություններից:

ԾՐԱԳԻՐ 8

ԿԱՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՀԻՄՆՈՒՄ

Նկարագիրը – Այս մասնավոր ներդրումային ծրագրով նախատեսվում է Դսեղում հիմնել կարի փոքր արտադրամաս, որտեղ կարտադրվեն անկողնու սպիտակեղեն, սփռոցներ և անձեռոցիկներ: Պատրաստի արտադրանքը կպիտակավորվի և կփաթեթավորվի:Կկատարվի նաև հագուստի չափսերի փոփոխություն, որի համար այսօր դսեղցին ստիպված հասնում է Վանաձոր: Հեռանկարում կկարվեն գիշերային և ներքնազգեստներ: Կպատվիրվեն և կկարվեն նաև մանկապարտեզի սաների համար տոնական հանդեսների զգեստներ, պարային խմբի երեխաների համար պարային տարազ, դպրոցականների համար աշակերտական համազգեստ: Մինչ օրս այս ամենը պատվիրվում է քաղաք Վանաձորում:

Ներդրումների բաշխվածք

Պետություն		Ներդրող	Դոնոր
Ընդամենը	20%		30%
50%	100%		
400,000		600,000	1,000,000
2,000,000			

Նպատակը –

- Կարի արտադրամասի հիմնումը կնպաստի համայնքում աշխատատեղերի ստեղծմանը,
- դսեղցին հնարավորություն կունենա գնային մատչելիությամբ ձեռք բերել վերոնշյալ որակյալ ապրանքատեսակները տեղում

խնդիրները-

- դիմել դոնոր կազմակերպությունների
- ձեռք բերել անհրաժեշտ գույք և նյութեր
- կազմակերպել արտադրությունը և վաճառքը

արդյունքները –

- հետագայում՝ կընդլայնվի արտադրությունը՝ մեծացնելով աշխատատեղերի քանակը,
- համայնքի զարգացում:

ԾՐԱԳԻՐ 9

ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը – Դսեղ համայնքի հողատարածքների մեծ մասը չի մշակվում, քանի որ հողերը չեն ոռոգվում և չմշակվելու պատճառով դրանք վեր են ածվել խոտհարքների: Ոռոգման ջուր չունենալու պատճառով բնակիչների համար տնտեսապես անարդյունավետ է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ զբաղվելը:

Նպատակը – հնարավորություն ստեղծել ոռոգելու 560հա սեփականաշնորհված, 106հա պահուստային և 150հա տնամերձ հողամասերը, ավելացնելու գյուղատնտեսության ծավալները և եկամուտները:

խնդիրը- նախագծել և վերակառուցել համայնքի ոռոգման ներքին ցանցը, հաշվի առնելով հողերի կտրտվածությունը

արդյունքները – ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ավելի շատ մշակովի և բերրի հողատարածքներ, գյուղատնտեսական մթերքների արտադրության աճ, համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, որը կնպաստի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումների

		2017	2018	2019	2020	2021
1.	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	155,7	157,9	160,7	160,7	167,3
2.	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	5005,8	5025,8	5105,3	5113,2	5123,5
3.	Հողի հարկ	7936,7	7942,7	7945,2	7959,7	7990,7
4.	Տեղական տուրքեր	490,0	514,0	514,0	538,0	538,0
5.	Դոտացիաներ պետական բյուջեից	35271,1	35271,1	35271,1	35271,1	35271,1
6.	Գույքի վարձակալությունից եկամուտներ	1100,0	1100,0	1110,0	1120,0	1150,0
7.	Այլ եկամուտներ	3000,0	3050,0	3060,0	3085,0	3092,0
	Ընդամենը եկամուտներ	52959,5	53062,7	53166,3	53248,7	53333,6

		2017	2018	2019	2020	2021
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	28515,0	28515,0	30000,0	30000,0	30000,0
2.	Տնտեսական հարաբերություններ	250,0	250.0	250.0	260,0	260,0

3.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	3000,0	2400,0	2400,0	2600,0	2600,0
4.	Կոմունալ ծառայություն	140,0	150,0	150,0	150,0	160,0
5.	Հանգիստ	830,0	830,0	840,0	840,0	840,0
6.	Սոցիալական պաշտպանություն	2100,0	2000,0	2000,0	2150,0	2200,0
7.	Կրթություն	5500,0	5500,0	5750,0	5730,0	5740,0
8.	Սոցիալական պաշտպանություն	2300,0	2000,0	2200,0	2200,0	2100,0
	Ընդամենը ծախսեր	42635,0	41395,0	43340,0	43930,0	43900,0

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Դեղ համայնքի առջև ծառացած հիմնական խնդիրները հետևյալն են.

- Գերեզմանատան ցանկապատի բացակայություն
- Միջնադարյան գերեզմանոցի ցանկապատի բացակայություն
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգման խնդիր
- Եկեղեցու տարածքի բարեկարգման խնդիր
- Գյուղ. տեխնիկայի պակաս և կաթի վերամշակման կետի բացակայություն
- Մարզասրահի բացակայություն
- Լուսավորության անցկացման խնդիր
- Կոյուղու բացակայություն
- Ոռոգման ցանցի բացակայություն
- Հակակարկտային կայանի բացակայություն
- Հրապարակի և հարակից մանկական խաղահրապարակի բարեկարգման խնդիր
- Հակահրդեհային համակարգի բացակայություն:

Այս խնդիրների լուծման ճանապարհին հանդիպած դժվարությունները կապված են ֆինանսական և տարածքային խնդիրների հետ: Հնգամյա զարգացման ծրագիրն իրականացնելիս համայնքը ակտիվորեն կհամագործակցի տեղական և միջազգային դոնորների, տեղացի և արտասահմանյան բարերարների հետ:

2.5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

ՈՒՏԵՍ (SWOT) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ	ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1. Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդավայրը լինելը եւ նրա տուն-թանգարանի առկայությունը, 2. Դսեղ գյուղի աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, 3. պատմական նշանավոր եւ հարուստ հուշարձանների առկայությունը, 4. Ծովևրե գեղատեսիլ լճի առկայությունը 5. հանգստի համար բնական բարենպաստ պայմանների առակայությունը 6. միջնակարգ դպրոցի կրթական բարձր մակարդակը, 7. արվեստի եւ մարզային խմբակների առկայությունը, 8. անտառների առկայությունը 9. գյուղում ավանդական միջոցառումների /Թումանյանական օրեր, Եվրոպայի ժառանգության օրեր և այլն/ անցկացումը, 10. տիկնիկային թատրոնների միջազգային ամենամյա փառատոնի անցկացումը,	1. Համայնքը ներկայացնել որպես տուրիստական պոտենցիալ ունեցող վայր և զբաղվել տուրիստական գործակալների ուշադրությունը, 2. Դսեղը Հայոց մեծ բանաստեղծի 150-ամյակին ընդառաջ վերածել զբական և մշակութային միջոցառումների օրրանի, 3. Խմելու ջրի բավարար վիճակ

համայնքի միջազգայնորեն ճանաչումը, 11. գրասենյակային ենթակառուցվածքների առկայություն 12. հյուրատներ 13. գազաֆիկացման համակարգի առկայություն 14. մատչելի գնային համակարգով գործող առևտրի սրահներ 15. ապրահանության մեխանիզմի առկայություն 16. հեծանվային ճամբար 17. Դսեղի այցելուների կենտրոն 18. մանկական խաղահրապարակ 19. հացի փուռ 20. անվճար մանկապարտեզ 21. ծաղիկների ջերմոց	
ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ 1. աշխատատեղերի պակաս 2. գյուղատնտեսական հողերի անմշակ լինելը 3. ոռոգման ջրի բացակայությունը 4. կոյուղու բացակայությունը 5. էլեկտրոսպասարկման որակի ցածր մակարդակ 6. հակակարկտային կայանների	ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ 1. գյուղնշանակության հողերի դեգրադացումը 2. տարերային աղետների ռիսկ

բացակայություն 7. հակահրդեհային համակարգի բացակայություն	

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Դսեղ դարձնել բարգավաճող համայնք, զարգացած ենթակառուցվածքներով բնակավայր, որտեղ բնակիչները կապրեն ապահով ու բարեկեցիկ կյանքով և իրենց տեր ու պատասխանատու կզգան համայնքի նկատմամբ: Ապահովվել Դսեղ համայնքի սոցիալ-տնտեսական աճը, համայնքը դարձնել միջազգային տուրիզմի և էկոտուրիզմի զարգացման կենտրոն: Որակյալ ծառայություններ մատուցել համայնքի բնակչությանը և Դսեղը դարձնել բարեկեցիկ և ներդրումների համար մրցունակ:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Նպաստել համայնքի կայուն զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը: Բարձրացնել համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրումը, նպատակային օգտագործել բյուջեի միջոցները, բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը, ապահովել համայնքի կրթության, մշակույթի, սպորտի, գյուղատնտեսության և մյուս բնագավառների նպատակային գործունեությունը:

Բարենպաստ պայմաններ ստեղծել ներդրումային դաշտը ընդլայնելու, նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համար: Խթանել զբոսաշրջության զարգացմանը, համայնքի գեղագիտական միջավայրի բարելավմանը: Ապահովել համայնքապետարանի արդյունավետ գործունեությունը, ընդունած որոշումների թափանցիկությունն ու հրապարակայնությունը: Նպաստել համայնքի կայուն և համաչափ զարգացմանը: Հետևողականորեն, բարեփոխումների իրականացման, ծրագրերի ներդրման ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանները, համայնքում ստեղծել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, համայնքի կառավարմանը մասնակից դարձնել ավելի մեծ թվով բնակիչների:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով հարկային պարտավորությունների, տեղական տուրքերի ու վճարների գանձման արդյունավետ քաղաքականություն
- Բարելավել կրթական, սպորտային և մշակութային ոլորտի գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան:
- Համայնքում ստեղծել աշխատատեղեր՝ տուրիզմի հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով:

- Դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, բարերարների ներգրավմամբ ու նախաձեռնություններով իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- Խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ:
- Նպաստել բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, աջակցելով պատմամշակութային հուշարձանների վերականգման, վերանորոգման աշխատանքներին, իրականացնելով համայնքի աղբահանության, կանաչապատման, բարեկարգման աշխատանքներ:
- Ապահովվելով համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանությունը՝ աջակցել անապահով ընտանիքներին:
- Խթանել գյուղատնտեսության զարգացմանը՝ ձեռք բերելով գյուղ.տեխնիկա:
- Խթանել համայնքում ծնելիությունը՝ խրախուսելով ծննդաբերող մայրերին:
- Աջակցել քաղ. պաշտպանության ծրագրերի անցկացմանը համայնքում:
- Աջակցել բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի անցկացմանը:

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ընդգրկված ծրագրերը կիրականացվեն համայնքի բյուջեից, նվիրատվություններից, ներքին պաշտոնական դրամաշնորհներից, արտաքին պաշտոնական դրամաշնորհներից, դոնոր կազմակերպություններից և այլ բարերարներից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, ✉ 1718, հրապարակ 1,
հեռ.(0253)6-14-39,էլ.փոստ`dsegh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2017 թվականի N 15-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Դսեղ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Դսեղ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 23 -Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Աղաջանյան			
Ն. Դալլաքյան			
Կ. Ղազարյան			
Ա. Մատոյան			
Դ. Վանյան			
Ա. Քոչարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կ.Տ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 03 -ի թիվ 15-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ** 0.5 գործակիցների կիրառմամբ 7500 դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ՝** 0.5 գործակցի կիրառմամբ 15000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 25000 դրամ:
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **հիսուն հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 25000 դրամ:
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **հարյուր հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ 50 000 դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **երեք հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 1500 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ. 0.5 գործակցի կիրառմամբ՝ 2500 դրամ:**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **երկու հարյուր հազար դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 100 000 դրամ:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ 50 000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 30 000 դրամ:

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **քսան հազար դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ **10 000 դրամ**:

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ **հիսուն հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ **25 000 դրամ**:

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **ութ հազար չորս հարյուր դրամ**, 0.3. գործակցի կիրառմամբ **2520 դրամ**:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **տաս հազար հարյուր դրամ**, 0.3 գործակցի կիրառմամբ 3030 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **տասներեք հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 10050 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **քսան հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 10050 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **քսանհինգ հազար մեկ դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 12500,5 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քառասունհինգ հազար մեկ դրամ 0.5 գործակցի կիրառմամբ 5000,5 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **ութ հազար չորս հարյուր դրամ**, 0.3. գործակցի կիրառմամբ **2520 դրամ**:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **տաս հազար հարյուր դրամ**, 0.3 գործակցի կիրառմամբ 3030 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **տասներեք հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 6500,5 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **քսան հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 10050 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **քսանհինգ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 12 550 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **քառասունհինգ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 22 550 դրամ:

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա

առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **երեք հարյուր հիսուն դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար. 0.5 գործակցի կիրառմամբ 175 000 դրամ:

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար **դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 2500 դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **քսանհինգ հազար դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **երկու հարյուր հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ

դ. խաղատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ՝ 250 000 դրամ:

ե. շահումով խաղերի համար՝ **երկու հարյուր հիսուն հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 125 000 դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ **հարյուր հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ՝ 50 000 դրամ:

12) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար հարյուր դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ **2550 դրամ:**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հինգ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 2550 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հարյուր դրամ 0.5 գործակցի կիրառմամբ 5050 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 7550 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **քսան հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ **10050 դրամ**:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեսուն հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ **15050 դրամ**:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հարյուր դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ՝ 550 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 550 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 1050 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար մեկ դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 2000,5 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **ութ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 4050 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տասնհինգ հազար հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ 7550 դրամ:

13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երկու հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 1000 դրամ:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **երեք հազար հինգ հարյուր դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ՝ 1750 դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ** 0.5 գործակցի կիրառմամբ՝ 750 դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ՝ 50 000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **տասը հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ 5000 դրամ:

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**. 0.5 գործակցի կիրառմամբ 250 000 դրամ:

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 1 250 000 դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ միլիոն դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 2 500 000 դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **յոթ միլիոն դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 3 500 000 դրամ:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **տասը միլիոն դրամ**, 0.5 գործակցի կիրառմամբ 5 000 000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը <u>համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.</u>

(Հոդված 14. Աղբահանության վճարի դրույքաչափը

1. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 10 դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 10000 դրամ:

2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

3. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի նպատակային կամ գործառնական նշանակությունը:

Հոդված 15. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

2. Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալի կամ անհատույց օգտագործողի՝ աղբահանության վճարի գծով պարտավորությունները փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ համայնքին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի հետ կնքված գործարքով:

4. Աղբահանության վճար վճարողի պարտավորությունը դադարում է դրամական միջոցների վճարմամբ կամ ֆիզիկական անձ համարվող վճարողի մահվամբ, եթե՝

1) վճարողի անշարժ գույքն անժառանգ ճանաչվելու հիմքով փոխանցվել է համայնքին ի սեփականություն.

2) պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման՝ մահացածի իրավունքը այլ անձի չի փոխանցվել:)

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

(Հոդված 14. Աղբահանության վճարի դրույքաչափը

1. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական 400 դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ առավելագույնը 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 3000 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 10000 դրամ:

2. Աղբահանության վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը յուրաքանչյուր համայնքի համար սահմանվում են համայնքի ավագանու կողմից օրենքով սահմանված կարգով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սահմաններում:

3. Աղբի տարբեր տեսակների համար կարող են սահմանվել տարբեր դրույքաչափեր: Ընդ որում, տարբեր դրույքաչափեր սահմանելիս կարող են հաշվի առնվել նաև անշարժ գույքի նպատակային կամ գործառնական նշանակությունը:

Հոդված 15. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը

1. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը օրացուցային ամիսն է:

2. Անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ցանկացած հիմքով փոփոխության դեպքում նոր սեփականատիրոջն է անցնում աղբահանության վճարի գծով նախկին սեփականատիրոջ չկատարած պարտավորությունը կամ գերավճարի իրավունքը:

3. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալի կամ անհատույց օգտագործողի՝ աղբահանության վճարի գծով պարտավորությունները փոխանցվում են համապատասխանաբար պետությանը կամ համայնքին, եթե այլ բան նախատեսված չէ նոր վարձակալի կամ անհատույց օգտագործողի հետ կնքված գործարքով:

4. Աղբահանության վճար վճարողի պարտավորությունը դադարում է դրամական միջոցների վճարմամբ կամ ֆիզիկական անձ համարվող վճարողի մահվամբ, եթե՝

1) վճարողի անշարժ գույքն անժառանգ ճանաչվելու հիմքով փոխանցվել է համայնքին ի սեփականություն.

2) պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման՝ մահացածի իրավունքը այլ անձի չի փոխանցվել:)

9) կենտրոնացված ջեռուցման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարները՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված

ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող ավազանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատում է համայնքի ավագանին.

18) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար հազար դրամ փոխհատուցման վճար:

Վշտունիակազմի քարտուղար Մ. Չատինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դսեղ համայնք, 1718, հրապարակ 1,
հեռ. (0253)6-14-39,էլ.փոստ:dsegh.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2017 թվականի N 16

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դսեղ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 50-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները

ավագանին որոշում է

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ	Կողմ (6)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Աղաջանյան			
Ն. Դալլաքյան			
Կ. Ղազարյան			
Ա. Մատոյան			
Դ. Վանյան			
Ա. Քոչարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կ.Տ

Հավելված
Դսեղ համայնքի ավագանու
03 մայիսի 2017թ. թիվ 16

Օգնություն հատկացված քաղաքացու
Ցուցակ

1. Գրիգորյան Աշոտ Մակարի – 20 000 /քսան հազար/ դրամ
2. Պապոյան Արմենակ Հարությունի - 20 000 /քսան հազար/ դրամ
3. Մուրադյան Սոխակ Եսայու - 20 000 /քսան հազար/ դրամ
4. Քոչարյան Լիլիա Միհրանի-20 000 /քսան հազար/ դրամ
5. Աթյան Միեր Հենրիկի – 40 000 /քառասուն հազար/ դրամ
6. Էվոյան Մաթևոս Միշայի – 50 000 /հիսուն հազար/ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՉԱՏԻՆՅԱՆ